

# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



## ԵԿԵՂԵՑԻԻՆ ՃՆՈՒՆՊ



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: Ruth Klassen

Story 55 of 60

[www.M1914.org](http://www.M1914.org)

*Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada*

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Երբ Յիսուս մահացաւ, Անոր սարսափած  
հետեւորդները կը պահուտէին: Յիսուսի  
երկինք համբարնալէն ետք Ան ինքզինք  
ցոյց տուաւ իր աշակերտներուն: Յիսուս  
ողջ էր: Բայց Յիսուս ծրագրած էր ձգել  
անոնց, երկինք երթալու համար, ուր միշտ  
կ'ապրէր մեր հօր Աստուծոյ հետ:



Նախքան  
Անոր  
մեկնիլը,  
Յիսուս  
խոստացաւ իր  
հետեւորդներուն,  
որ ինք Աստուծոյ Սուրբ

Չոգին պիտի դրկէ, որպէսզի իրենց օգնական  
եւ հանգստացնող ըլլայ: (Յովհաննու 15,26):



Ժամանակը մօտ էր, քանի մը օր Յիսուսի մեկնումէն ետք Աստուծոյ Սուրբ Հոգին եկաւ: Աստուծոյ Սուրբ Հոգին եկաւ:


3

Այսպէս եղաւ: Մօտաւորապէս Յիսուսի 120 հետեւորդներ կ'աղօթէին միասին տան մը մէջ: Յանկարծ տունը փոթորկալի, հզօր քամիի մը ձայնով լեցուեցաւ:




4

Սուր ծայրով կրակի բոցեր հանգչեցան ամէն անձի վրայ: Բոլորն ալ լեցուեցան Սուրբ Հոգիով, ինչպէս որ Յիսուս խոստացած էր:




5

Դուրսը՝ փողոցը, Յիսուսի հետեւորդները սկսան տարբեր լեզուներ խօսիլ, որ իրենց կեանքին մէջ չէին խօսած:




6

Օտարները, որոնք երուսաղէմ կ'այցելէին լսեցին աշակերտներուն խօսակցութիւնները, որոնք կը պատմէին Աստուծոյ հրաշալի գործերուն մասին զանազան լեզուներով:



7

Այցելուները շատ հրաշացան: "Ի՞նչ կը նշանակէր այս մէկը, ըսին անոնք: "Անոնք տոր գինիով լեզուեր են", ծիծաղեցան շատեր:



8


Սակայն Պետրոս ըսավ. "Ասոնք գինովներ չեն... այս էր ան, որ խօսած էր Յովել մարգարեն..." Ետքը Պետրոս յիշեցուց, որ տարիներ առաջ, Աստուած խոստացած էր, որ Սուրբ Հոգին պիտի գայ եւ օրհնէ ու օգնէ ժողովուրդը:



9


Պետրոս ըսավ, որ ժողովուրդը պետք է ետդարձ ընէ իր մեղքերէն եւ մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով: "... եւ դուք պիտի ստանաք Սուրբ Հոգիին պարգեւը", Պետրոս ըսավ:

Մօտաւորապէս 3000 հոգի հնազանդեցան:




10

Ասոնք միացան Յիսուսի աշակերտներուն իբր Յիսուսի պաշտող անձեր: Ժամանակի ընթացքին, աւելի եւ աւելի մեծ թիւով մարդիկ աւելցան այն եկեղեցիին, որ Աստուած սկսավ այն օրը երբ Սուրբ Հոգին եկավ:



11

Սուրբ Հոգին իր ուժը բերավ Աստուծոյ ժողովուրդին կեանքին մէջ: Օր մը, Պետրոս եւ Յովհաննէս միասին տաճար գացին աղօթքի ժամուն: Կաղ մուրացկան մը նստած էր տաճարի դրան առջեւ: Ան Պետրոսէն եւ Յովհաննէսէն դրամ մը մուրաց:



12

Պետրոս պատասխանեց. "Արձաթը եւ ոսկին ես չունիմ, բայց ինչ որ ունիմ կու տամ քեզի: Նազարէթ Յիսուս Քրիստոսի անունով ոտքի ել եւ քալէ": Եւ անոր աջ ձեռքէն բռնելով ոտքի հանեց: Ան վեր ցատկեց, ոտքի ելավ եւ տաճար մտավ իրեն հետ քաշելով, ցատկելով եւ Աստուծոյ փառք տալով:



13

Մեծ բազմութիւն մը հաւաքուեցաւ, զմայլած հրաշքին վրայ: Պետրոս ըսավ իրեն, որ այս Աստուծոյ ուժն էր եւ ոչ թէ իր, որ առողջացուց այս հաշմանդամ մարդը:



14


Երբ Պետրոս յիշեցուց հրեաներուն, թէ Աստուած Յիսուսը մեռելներէն բարձրացուց, տաճարի առաջնորդները զայրացած ձերբակալեցին

Պետրոսը, Յովհաննէսը եւ բանտարկեցին գանոնք: Սակայն 5000ի չափ մարդիկ հաւատացին Յիսուսի:




15

Յաջորդ օրը Պետրոսը եւ Յովհաննէսը տաճարի կառավարիչներուն առջեւ դատավարութեան կանգնեցան: "Որո՞ւ եւ ի՞նչ ուժով եւ որո՞ւ անունով այս մէկը ըրիր", հարցուցին անոնք:



16

Սուրբ հոգիով լեցուած Պետրոս քաջարիօրէն պատասխանեց: "... Նազարէթի Յիսուս Զրիստոսի անունով, որուն դուք խաչեցիք, որուն Աստուած մեռելներէն բարձրացուց, իրմով այս մարդը կը կենայ ձեր բոլորին առջեւ":



17

Պետրոս անվախօրէն շարունակեց. "... Ուրիշ որեւէ մէկ անուն չկայ ոչ երկնքի մէջ, որ տրուած է մարդոց որմով կրնանք փրկուիլ":



18

Կառավարիչները որովհետեւ չէին ուզեր ժողովուրդը հաւատայ Յիսուսին անոնք Պետրոսին եւ Յովտաննէսին վատ ձեւով սպառնացին: Այսկէ անդին այլեւս մէկու մը չէք խօսիր Յիսուսի անունով":




19

Անցեալին Պետրոս կը վախնար Յիսուսի մասին խօսելու: Սակայն այդ Սուրբ Յոգին գալէն առաջ եր: Յիմա որեւէ մէկը չի կրնար վախցնել զինք:




20




Պետրոս եւ Յովհաննէս  
պատասխանեցին.  
"Արդե՞ք ճիշդ է  
ձեզի իմանալ  
գան Աստուծոյ,  
դուք դատեցէք:  
Որովհետեւ չենք  
կրնար խօսիլ,  
բայց միայն ան  
ինչ որ մենք  
տեսանք եւ  
իմացանք":

21




Բազմաթիւ  
սպառնալիքներէն  
ետք, կառավարիչները  
ազատ արձակեցին  
Պետրոսը եւ Յովհաննէսը:

22



Աստուծոյ քաջ  
ծառաները  
պատմեցին իրենց  
ընկերակիցներուն  
ամէն ինչ որ հետերնին  
եղաւ բանտին եւ  
դատարանին մէջ:

23



Ետքը անոնք  
մեծ աղօթք  
մը եւ փառքի  
հանդիպում  
մը ըրին: Նորէն,  
Աստուծոյ Սուրբ  
Յոգին լեցուց մեր  
ժողովուրդը եւ  
մանուկ եկեղեցին  
մեծցաւ ու աճեցաւ:

24

Եկեղեցիին ծնունդը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Գործք Առաքելոց 1 - 4

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130



Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք  
մեզ կը կոչէ: Մեզին պատիժը մահն է, սակայն Աստուած  
այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց,  
որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար  
պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը  
բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը  
պահանջես որպէսզի ներք քեզի քու մեղքերուդ համար,  
Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ  
դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր  
Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար  
եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ  
կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր  
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ւ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի  
որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16